ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐ

ՀՐԱՄԱՆ

N o 20-Լ **«25» ապրիլի 2023 թ.**

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐԻ 2019 ԹՎԱԿԱՆԻ ՀՈՒՆԻՍԻ 17-Ի N 27-Լ ՀՐԱՄԱՆՈՒՄ ՓՈՓՈԽՈՒԹՅՈՒՆ ԿԱՏԱՐԵԼՈՒ ՄԱՍԻՆ

Ղեկավարվելով «Նորմատիվ իրավական ակտերի մասին» օրենքի 33-րդ և 34-րդ հոդվածներով և հիմք ընդունելով «Կառավարչական իրավահարաբերությունների կարգավորման մասին» օրենքի 7-րդ հոդվածի 4-րդ մասը և ՀՀ վարչապետի 2019 թվականի հունիսի 1-ի թիվ 661-Լ որոշմամբ հաստատված հավելվածի 19-րդ կետի 7-րդ ենթակետը՝

ՀՐԱՄԱՅՈՒՄ ԵՄ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հունիսի 17-ի «Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավաբանական վարչության կանոնադրությունը հաստատելու մասին և Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի 2019 թվականի հունիսի 6-ի թիվ N 01-Լ հրամանն ուժը կորցրած ճանաչելու մասին» N 27-Լ հրամանի հավելվածը շարադրել նոր խմբագրությամբ՝ համաձայն հավելվածի:

X

ՆԱԽԱՐԱՐ՝ **Ժ. ԱՆԴՐԵԱՍՅԱՆ**

Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2023 թվականի ապրիլի 25-ի 20-Լ հրամանի

«Հավելված

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի

2019 թվականի հունիսի 17-ի 27-Լ հրամանի

ԿԱՆՈՆԱԴՐՈՒԹՅՈՒՆ

ՀԱՅԱՍՏԱՆԻ ՀԱՆՐԱՊԵՏՈՒԹՅԱՆ ԿՐԹՈՒԹՅԱՆ, ԳԻՏՈՒԹՅԱՆ, ՄՇԱԿՈՒՅԹԻ ԵՎ ՍՊՈՐՏԻ ՆԱԽԱՐԱՐՈՒԹՅԱՆ ԻՐԱՎԱԲԱՆԱԿԱՆ ՎԱՐՉՈՒԹՅԱՆ

1. ԸՆԴՀԱՆՈՒՐ ԴՐՈՒՅԹՆԵՐ

1. Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության (այսուհետ՝ Նախարարություն) իրավաբանական վարչությունը (այսուհետ՝ Վարչություն) Նախարարությանն աջակցող մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանում է:

2. Վարչությունն իր գործունեության ընթացքում ղեկավարվում է Հայաստանի Հանրապետության Սահմանադրությամբ, Հայաստանի Հանրապետության օրենքներով, Հայաստանի Հանրապետության Նախագահի հրամանագրերով, Հայաստանի Հանրապետության Կառավարության և Հայաստանի Հանրապետության վարչապետի որոշումներով, Նախարարության և սույն կանոնադրությամբ, Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարի (այսուհետ՝ Նախարար) և Նախարարության գլխավոր քարտուղարի (այսուհետ՝ Գլխավոր քարտուղար) հրամաններով և այլ իրավական ակտերով:

3. Վարչության կանոնադրությունը հաստատում, դրանում փոփոխություններ և լրացումներ է կատարում Նախարարը:

4. Վարչության կառուցվածքը և հաստիքացուցակը հաստատում է Նախարարը:

5. Վարչության աշխատակիցները կարող են ընդգրկվել պետական կառավարման բնագավառում որոշակի գործառույթների իրականացման նպատակով ստեղծվող հանձնաժողովների կազմում, աշխատանքային և այլ խմբերում:

6. Վարչության անվանումն է՝ Հայաստանի Հանրապետության կրթության, գիտության, մշակույթի և սպորտի նախարարության իրավաբանական վարչություն:

2. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ՆՊԱՏԱԿՆԵՐԸ ԵՎ ԽՆԴԻՐՆԵՐԸ

7. Վարչության հիմնական նպատակն է՝

Իր իրավասության սահմաններում նախարարության նպատակների և խնդիրների իրականացմանը աջակցելը, կրթության, գիտության, մշակույթի և սպորտի ոլորտներում իրավական ակտերի մշակման և կատարելագործման աշխատանքներին մասնակցությունը, տարբեր դատական ատյաններում նախարարության շահերի պաշտպանությունը:

8. Վարչության խնդիրներն են՝

8.1 Նախարարության իրավասության սահմաններում օրենքների և այլ իրավական ակտերի նախագծերի մշակում, Նախարարության ստորաբաժանումների կողմից մշակված իրավական ակտերի նախագծերի իրավական փորձաքննության ենթարկում,

8.2 Նախարարության իրավասությանը վերապահված բնագավառներում իրավական ակտերի կատարելագործման վերաբերյալ առաջարկությունների ներկայացում,

8.3 Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված իրավական փաստաղթերի նախագծերի ուսումնասիրում՝ իրավական նորմերի ապահովման մասով:

3. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾԱՌՈՒՅԹՆԵՐԸ

9. Վարչությունը իր իրավասության շրջանակներում իրականացնում է հետևյալ գործառույթները՝ ըստ բաժինների.

9.1 փաստաթղթերի ուսումնասիրման և դատական գործերի բաժինը՝

1) ապահովում է դատական ատյաններում նախարարության ներկայացուցչությունը՝ որպես հայցվոր, պատասխանող, ինքնուրույն պահանջ ներկայացնող (չներկայացնող) երրորդ անձ, իրականացնում է նախարարության շահերի պաշտպանությունը,

2) ապահովում է հայցադիմումների, հայցադիմումների պատասխանների, առարկությունների, դիրքորոշումների, վերաքննիչ և վճռաբեկ բողոքների, սահմանադրական գանգատների կազմման աշխատանքներ,

3) մասնակցում է աշխատանքային խմբերի և հանձնաժողովների աշխատանքներին՝ ըստ անհրաժեշտության, ինչպես նաև տրամադրում է իրավական վերլուծություններ և եզրակացություններ,

4) իրականացում է նախարարության, այդ թվում՝ դրա առանձին կառուցվածքային ստորաբաժանումների և պաշտոնատար անձանց գործողությունների և որոշումների դեմ վերադասության կարգով ներկայացված վարչական բողոքների քննություն,

5) ապահովում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ներկայացված Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությանը չվերապահված հարցերով դիմումների ընթացքը,

6) մշակում է Նախարարության կողմից կնքվող հաշտության համաձայնությունների նախագծերը,

7) իրականացնում է Նախարարության գործառույթներին առնչվող Հայաստանի Հանրապետության վճռաբեկ դատարանի նախադեպային որոշումների միջոցով Նախարարության կողմից օրենքի միատեսակ կիրառության ապահովման գործընթացը,

8) իրականացնում է Նախարարության մասնակցությամբ քաղաքացիական և վարչական գործերով կայացված դատական ակտերի հարկադիր կատարման փուլում ներկայացուցչություն,

9) կազմում է բաժնի աշխատանքային ծրագրի և բաժնի կողմից կատարված աշխատանքների վերաբերյալ հաշվետվություններ,

10) տրամադրում է կարծիք Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված իրավական փաստաղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր, հրամաններ, գրություններ և այլն) նախագծերի վերաբերյալ՝ իրավական նորմերի ապահովման մասով,

11) իրականացնում է Նախարարի և Գլխավոր քարտուղարի հրամաններով, վերջիններիս և Վարչության պետի հանձնարարականներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներից բխող այլ լիազորություններ,

12) իրականացնում է վարչական վարույթներ:

9.2 Օրենսդրության բաժինը՝

1) մասնակցում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառների վերաբերյալ Հայաստանի Հանրապետության իրավական ակտերի նախագծերի մշակման աշխատանքներին,

2) տրամադրում է նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից մշակված, ինչպես նաև պետական մարմինների կողմից նախարարության քննարկմանը ներկայացված իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրավական եզրակացություններ,

3) ներկայացնում է իրավական ակտերում փոփոխություններ, լրացումներ կատարելու վերաբերյալ առաջարկությունների, այդ թվում՝ դատական պրակտիկայի ուսումնասիրության արդյունքում, և անհրաժեշտության դեպքում, մշակում է իրավական ակտերի նախագծեր,

4) մասնակցում է աշխատանքային խմբերի և հանձնաժողովների աշխատանքներին՝ ըստ անհրաժեշտության, ինչպես նաևտրամադրում իրավական եզրակացություններ,

5) ապահովում է ֆիզիկական և իրավաբանական անձանց կողմից ներկայացված Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությանը չվերապահված հարցերով դիմումների ընթացքը,

6) տալիս է պարզաբանումներ Նախարարության հիմնական մասնագիտական կառուցվածքային ստորաբաժանումների իրավասությանը չպատկանող իրավական ակտերի հետ կապված հարցերի վերաբերյալ, ինչպես նաև կատարում դրանցում փոփոխություններ,

7) կատարում է վարչության կողմից մշակվող իրավական ակտերի նախագծերի վերաբերյալ իրազեկման բարձրացման միջոցառումների, հանրային և մասնագիտական քննարկումների կազմակերպման աշխատանքների,

8) կազմակերպում է «Զինվորական ծառայության և զինծառայողի կարգավիճակի մասին» օրենքի հիման վրա պարտադիր զինվորական ծառայության զորակոչից տարկետում տրամադրելու գործընթացը,

9) կազմակերպում է Հայաստանի Հանրապետության 2019 թվականի փետրվարի 15-ի 89-Ն որոշման հիման վրա պարտադիր զինվորական ծառայության զորակոչից ազատելու գործընթացը,

10) պատասխանում է վերը նշված կետերի վերաբերյալ քաղաքացիների դիմումների և նշված իրավական ակտերի վերաբերյալ տալիս պարզաբանումներ, դրանցում կատարում փոփոխություններ և լրացումներ,

11) մասնակցում է կրթության, գիտության, մշակույթի և սպորտի բնագավառին առնչվող հարցերի վերաբերյալ միջազգային պայմանագրերի (համաձայնագրերի) մշակմանն ու քննարկմանը՝ ըստ սահմանված կարգի:

12) տրամադրում է կարծիք Նախարարության կառուցվածքային ստորաբաժանումների կողմից ներկայացված իրավական փաստաղթերի (պայմանագրեր, համաձայնագրեր, հրամաններ, գրություններ և այլն) նախագծերի վերաբերյալ՝ իրավական նորմերի ապահովման մասով,

13) իրականացնում է Նախարարի և Գլխավոր քարտուղարի հրամաններով, վերջիններիս և Վարչության պետի հանձնարարականներով և սույն կանոնադրությամբ իրեն վերապահված գործառույթներից բխող այլ լիազորություններ:

4. ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԳՈՐԾՈՒՆԵՈՒԹՅԱՆ ԿԱԶՄԱԿԵՐՊՈՒՄԸ, ՂԵԿԱՎԱՐՈՒՄԸ ԵՎ ՀԱՄԱԿԱՐԳՈՒՄԸ

10. Վարչության պետը հաշվետու է Նախարարին:

11. Վարչությունն անմիջական հաշվետու է Գլխավոր քարտուղարին:

12. Վարչության գործունեությունը համակարգում և ղեկավարում է վարչության պետը: Վարչության պետի բացակայության դեպքում նրան փոխարինում է վարչության պետի տեղակալը, իսկ նրա բացակայության դեպքում՝ բաժնի պետերից մեկը:

13. Վարչության գործառույթների իրականացմամբ ստեղծված փաստաթղթերը ստորագրում է վարչության պետը:

14. Վարչության կառուցվածքում ընդգրկված բաժինների աշխատանքը ղեկավարում և կազմակերպում են բաժնի պետերը:

15. Վարչության պետի հանձնարարությամբ Վարչության պետի տեղակալը.

1) համակարգում է վարչությանը (ըստ բաժինների) վերապահված գործառույթներ՝ բանավոր կամ նախարարության փաստաթղթաշրջանառության համակարգի միջոցով, ինչպես նաև անձամբ կատարում վարչության պետի հանձնարարականները,

2) ապահովում է նախարարության իրավասության շրջանակներում իրականացվող հակակոռուպցիոն միջոցառումների և նախարարության կողմից հակակոռուպցիոն ոլորտի միջազգային պարտավորությունների կատարմանն ուղղված աշխատանքների համակարգումը:

16. Վարչության պետը, Վարչության պետի տեղակալը, Վարչության բաժնի պետերը և աշխատողները համարվում են քաղաքացիական ծառայողներ:

17. Վարչության պետի, Վարչության պետի տեղակալի, Վարչության բաժնի պետերի և աշխատողների աշխատանքի կազմակերպման և ղեկավարման պատասխանատվության, որոշումներ կայացնելու լիազորությունների, շփումների և ներկայացուցչության, խնդիրների բարդության և դրանց ստեղծագործական լուծման, գիտելիքների և հմտությունների, իրավունքների և պարտականությունների հետ

կապված դրույթները սահմանվում են քաղաքացիական ծառայության պաշտոնների անձնագրերով:

5.ՎԱՐՉՈՒԹՅԱՆ ԿԱՌՈՒՑՎԱԾՔԸ

18. Վարչությունը կազմված է հետևյալ ներքին կառուցվածքային միավորներից՝

1) Փաստաթղթերի ուսումնասիրման և դատական գործերի բաժին,

2) Օրենսդրության բաժին: